ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի հունիսի 19-ի թիվ 1.2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/11

18.06.2026թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը

**<u>Հարցում</u>**

Խնդրում եմ պարզաբանել. համատեղ գործունեության պայմանագրով գործընկեր 1-ը ներկայացնում է ֆինանսական միջոցներ և բանկային երաշխիքները, իսկ գործընկեր 2-ը մասնագիտական փորձառությունը՝ նախկինում կատարված պայմանագրեր և աշխատանքային ռեսուրսները՝ լիցենզիաների համապատասխան ներդիրները: Գործընկեր 1-ն է վարում 3-րդ անձանց հետ հարաբերությունները, կողմերի անունից ցանկացած փաստաթուղթ՝ պայմանագիր, համաձայնագիր փոփոխություն ստորագրում և կնքում է գործընկեր 1-ը, Գործընկեր 2-ի տրված լիազորագրով: Գումարը ստանում է գործընկեր 1-ը: Հրավերի պահանջներին համապատասխանում է արդյոք վերոգրյալ պայմաններով համատեղ գործունեության պայմանագիրը, թե Գործընկեր 1-ը պարտադիր պետք է ունենա Լիցենզիա:

**<u>Պարզաբանում</u>**

Հրավերի I մասի 2.6 կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Ինչպես ներկայացված հայտը, այնպես էլ կոնսորցիումով մասնակցելու դեպքում համատեղ գործունեության պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունները գնահատող հանձնաժողովի կողմից կգնահատվեն հրավերի պահանջներին համապատասխան:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/11 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Արմենուհի Մանուչարյանին:

Հեռախոս՝ 011 621 821
Էլ. փոստ՝ a.manucharyan@minurban.am
ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-26/11 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

**Заявление**
**о разъяснении приглашения**

**Этот текст заявления утвержден оценочной комиссией**
**Постановлением № 1.2 от 19.06.2026 г. и опубликован**
**Согласно статье 29 Закона РА "О закупках"**

**Код процедуры HHQK-BMAShDzB-26/11**

**<u>Запрос</u>**

Пожалуйста, уточните: в соответствии с соглашением о совместном предприятии партнер 1 предоставляет финансовые ресурсы и банковские гарантии, а партнер 2 — профессиональный опыт (ранее заключенные контракты) и трудовые ресурсы (соответствующие вставки лицензий). Партнер 1 ведет отношения с третьими лицами, любые документы — контракты, поправки к соглашениям — подписываются и заключаются партнером 1 от имени сторон на основании доверенности, выданной партнером 2. Партнер 1 получает денежные средства. Соответствует ли соглашение о совместном предприятии с вышеуказанными условиями требованиям приглашения, или партнер 1 должен иметь лицензию?

**<u>Разъяснение</u>**

Согласно Части I, Пункту 2.6 Приглашения, участники могут принимать участие в процедуре закупок в составе совместного предприятия (консорциума). Как поданная заявка, так и, в случае участия в консорциуме, обязательства, принятые сторонами по соглашению о совместном предприятии, будут оцениваться оценочной комиссией в соответствии с требованиями Приглашения.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можно обратиться к секретарю оценочной комиссии процедуры закупки под кодом HHQK-BMAShDzB-26/11 Арменуи Манучарян.

Телефон: 011 621-821

Электронная почта: a.manucharyan@minurban.am

Заказчик: комитет по градостроительству РА